Հաստատում եմ

ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ղեկավար Կ. Միքայելյան

(Պատվիրատուի ղեկավարի անունը, ազգանունը)

______________________

(ստորագրությունը)

< 25> նոյեմբերի 2010թ.

Կ.Տ

# ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ

# ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Հիմնական տեղեկություններ գնման մասին

1.1. Պատվիրատուի

Անվանումը ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

Հասցեն Հանրապետության հրապարակ Կառավարական տուն 3

1.2. Գնման առարկայի տեսակը

ծառայություն ☑

1.3 Կարիքի բավարարման միջոցը

գնում ☑

1.4. Գնման առարկայի համառոտ նկարագիրը ՀՀ Արմավիրի մարզի Ջանֆիդա գյուղական համայնքի տարածքում Արաքս գետի 28/2-28 սահմանային նշանների հատվածում վթարված ափապաշտպան արգելաթմբի վերականգնման աշխատանքների կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայություն

1.5. Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձի

Անվանումը (անունը, ազգանունը) < Հայջրնախագիծ ինստիտուտ> ՓԲԸ

Հասցեն ք. Երևան, Վ.Վաղարշյան 12

Հեռախոսը /աշխ/ Ֆաքսը ________ Էլ. փոստի հասցեն

1.6. Կնքված գնման պայմանագրի (կցվում է)

Ծածկագիրը N ՀՀ ԳՆ – ԾՁԲ 10-20 գնման պայմանագիր

Կնքման ամսաթիվը 25.11.2010թ

Գործողության ժամկետը գործում է մինչև պայմանագրով սահմանված պարտավորությունների լրիվ կատարման ավարտը

Գինը 2 200 000 դրամ

1.7. Գնումների պաշտոնական տեղեկագրում կնքված պայմանագրի մասին տեղեկատվություն հրապարակելու նպատակով պատվիրատուն լիազոր մարմնին ներկայացրե՞լ է պահանջվող տեղեկատվության տեքստը

Այո ☑



Արձանագրության վարման պատասխանատուի ստորագրությունը ______________________

## 2. Գնման գործընթացի նախապատրաստումը

### 2.1. Գնման պահանջի ծագման

**Իրավական հիմքը** Նախագծանախահաշվային փաստաթղթերի հաստատման օրը

**Օրը՝ ամսաթիվը** 19 նոյեմբերի 2010թ.

### 2.2. Պատվիրատուի ղեկավարը սահմանել է՝

**Պատասխանատու ստորաբաժանում** ☑

Անվանումը Հողերի օգտագործման և մելորացիայի վարչություն

Իրավասությունը վերապահելու հիմքը ՀՀ գյուղատնտեսության աշխատակազմի ղեկավարի 19.11.2010թ. N 48-Ա հրաման

Ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը Հողերի օգտագործման և մելորացիայի վարչության պետ՝ Վ.Հովհաննիսյան

Հեռախոսը /աշխ/ 29-74-33 **Ֆաքսը** էլ. փոստի հասցեն

2.3. Գնման բնութագրը պատվիրատուի ղեկավարի կողմից հաստատելու հիմքը ՀՀ գյուղատնտեսության աշխատակազմի ղեկավարի 19.11.2010թ. N 49-Ա հրաման

2.4. Մեկ անձից գնման ձևի կիրառման պայմանն ըստ »Գնումների մասին« ՀՀ օրենքի 23 հոդվածի համապատասխան կետի՝

☑ արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ և գնման այլ ձևի կիրառումը՝ ժամկետի առումով անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր կանխատեսել, ինչպես նաև եթե գնման առարկան ներառված չէ պարբերական մրցույթով կնքված պայմանագրերում.

2.4. Մեկ անձից գնման ձևի կիրառման ընտրված պայմանի հիմնավորումը

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջանֆիդա գյուղական համայնքի տարածքում Արաքս գետի 28/2-28 սահմանային նշանների հատվածում վթարված ափապաշտպան արգելաթմբի հետևանքով ստեղծվել է հեղեղավտանգ (արտակարգ) իրավիճակ: Հայաստանի Հնարապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 24-ի N 1263-Ն որոշմամբ սահմանվել է արգելաթմբերի վերականգման աշխատանքների կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների գնումն իրականացնել <Գնումների մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի <բ> կետի համաձայն՝ մեկ անձից գնման ձևով, առանց Հայաստանի Հնարապետության կառավարության 2008 թվականի հունիսի 5-ի N 853-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 7-րդ կետի 3-րդ ենթակետի <բ> պարբերության պահանջների պահպանման:

## 3. Գնման պայմանագրի կնքումը

### 3.1. Գնման պայմանագիրը կնքելու նպատակով պատվիրատուի առաջարկը ներկայացնելու միջոցը՝

☑ **Մեկ անձին պայմանագիր կնքելու առաջարկի ներկայացում**



Արձանագրության վարման պատասխանատուի ստորագրությունը ____________

3.2. Տեղեկություններ այն անձանց (անձի) մասին որոնց ուղարկվել է պատվիրատուի առաջարկը.

| N | Անվանումը (անուն, ազգանունը) | Հասցեն | Ներկայացված առաջարկի հիմքը՝ գրության համարը և ամսաթիվը (պատճենը կցվում է) |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1. | <Հայջրնախագիծ ինստիտուտ> ՓԲԸ | ք. Երևան Վ.Վաղարշյան 12 | N ԿՄ/06.1/5227-10 19.11.2010թ |

3.3. Տեղեկություններ պատվիրատուի առաջարկը ընդունած անձանց վերաբերյալ.

| N | Անվանումը (անուն, ազգանունը) | Հասցեն | Առաջարկը ընդունելու հիմքը՝ գրության համարը և ամսաթիվը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1. | <Հայջրնախագիծ ինստիտուտ> ՓԲԸ | ք. Երևան Վ.Վաղարշյան 12 | N 164 25.11.2010թ. |

3.4. Բանակցություններ

Պատվիրատուն վարե՞լ է բանակցություններ

Այո ☐ Ոչ ☑

Եթե այո, ապա նշել՝

4. Գնման ընթացակարգի արձանագրության վարման պատասխանատու անձի

Անուն, ազգանունը Դենիս Առուստամյան

Պաշտոնը Ֆինանսաբյուջետային բաժնի առաջատար մասնագետ

Հեռախոսը /աշխ/ 54-21-19 Ֆաքսը__Էլ. փոստի հասցեն



Արձանագրության վարման պատասխանատուի ստորագրությունը ________

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**N ՀՀԳՆ-ԾՁԲ-10-20**

*ք. Երևան* «25» Նոյեմբերի 2010թ..

*ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Կ.Միքայելյանը, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «Հայջրնախագիծ ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Յու. Զավալյանը, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, ղեկավարվելով իրենց կանոնադրություններով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:*

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

*1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում ՀՀ Արմավիրի մարզի Ջանֆիդա գյուղական համայնքի տարածքում Արաքս գետի 28/2-28 սահմանային նշանների հատվածում վթարված ափապաշտպան արգելաթմբի վերականգնման աշխատանքների կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունները (այսուհետ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 և 2 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագրի և գնման ժամանակացույցի պահանջների:*

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

***2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝***

*2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի մատուցած Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.*

*2.1.2 Առանց Ծառայության արդյունքի դիմաց վարձատրելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցել իրեն պատճառված վնասները, եթե կատարողի կողմից մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին և (կամ) խախտել է Ծառայության մատուցման ժամկետը և Ծառայությունը չի կարող մատուցել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում:*

*2.1.3 Չընդունել Ծառայության արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին և Տեխնիկական բնութագրով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:*

*2.1.4 Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ այդ մասին առնվազն 20 օր առաջ տեղեկացնելով Կատարողին և հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները:*

***2.2 Պատվիրատուն պարտավոր է՝***

*2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:*

*2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:*

***2.3 Կատարողը իրավունք ունի՝***

*2.3.1 Մինչև ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու մատուցված Ծառայության համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված դեպքի:*

*2.3.2 Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 20 օր առաջ տեղեկացնելով Պատվիրատուին:*

*2.3.3 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.3 կետում նշված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն*

պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

2.4.3 Սույն պայմանագրի 2.1.3 կետով նախատեսված դեպքում Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը և Պատվիրատուին վճարել սույն պայմանգրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.4.4 սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժ և տուգանքը:

2.4.5 Եթե իրականացվող աշխատանքի երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք 10 բանկային օրվա ընթացքում՝հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարողը Ծառայության մատուցման ավարտից երկու աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N3):

3.2 Պատվիրատուն հնաձման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձման-ընդունման մեկ օրինակը կամ Ծառայության արդյունքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.3 Կատարողի մատուցած Ծառայության արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

## 4. ՊԱՅՄԱՆԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կողմից մատուցման ենթակա Ծառայության գինը կազմում է 2 200 000 (երկու միլիոն երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կոմից իրականացվող բոլոր ծախսերը: Ծառայությունը մատուցվում է 5% շահույթով:

4.2 Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն՝ նավազեցնելու այդ գինը:

4.3 Պատվիրատուն իրեն մատուցված Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանգրի N 4 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցին համապատասխան, բայց ոչ ուշ քան սույն թվականի դեկտեմբերի 25-ը :

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության որակի և սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման, 2.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Ծառայությունը չընդունելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0.05 տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ չմատուցված Ծառայության գնի 0.05 տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված ժամկետի

խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տուգանքի և տույժի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում կնքելու պահից ու գործում է մինչև պայմանագրով սահմանված պարտավորությունների լրիվ կատարման ավարտը:

7.2 Այն դեպքում, երբ »Գնումների մասին« ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա, այդ հիմքերը ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել Պատվիրատուի կրած վնասներն, այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Եթե սույն պայմանագրի գնի հիմնավորվածության և արժանահավատության փորձաքննության արդյունքում պայմանագրի գինը որակվում է շուկայական գնից տասը տոկոս բարձր, և կատարողը չի համաձայնում այդ չափով գնի նվազեցմանը, ապա Պատվիրատուն պայմանագիրը միակողմանիորեն լուծում է և չի կրում պայմանագրի լուծման հետևանքով առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը:

7.4 Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով սույն պայմանագրով նախատեսված գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

7.5 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.6 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների

համապատասխան իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N1, 2, 3 և 4 հավելվածները համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն N 3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
h/h 900011008902

Կ.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Հայջրնախագիծ ինստիտուտ »ՓԲԸ
ք.Երևան Վ.Վաղարշյան 12

«Հայ Բիզնես Բանկ» ՓԲԸ
ՀՀ 1150000088680300

ՅՈՒ. ՋԱՎԱԴՅԱՆ

Հավելված 1
«25» նոյեմբերի 2010թ կնքված
թիվ ՀՀԳՆ-ԾՁԲ-10-20 գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Զանգիդա գյուղական համայնքի տարածքում Արաքս գետի 28/2-28 սահմանային նշանների հատվածում վթարված ափապաշտպան արգելապատնեշի վերականգնման աշխատանքների կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության իրականացման

ՀՀ Արմավիրի մարզի Զանգիդա գյուղական համայնքի տարածքում Արաքս գետի 28/2-28 սահմանային նշանների հատվածում վթարված ափապաշտպան արգելապատնեշի վերականգնման աշխատանքների կատարման որակի նկատմամբ անհրաժեշտ է իրականացնել տեխնիկական հսկողություն: Համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարի 1998 թվականի ապրիլի 28-ի № 44 հրամանով հաստատված ,Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգի, նշված ծառայությունն իրականացնող կազմակերպությունը

ա) իրականացնում է հսկողական ստուգում, որի ժամանակ պարզում է կատարվող աշխատանքների համապատասխանությունը աշխատանքների տեխնիկական բնութագրին և գործող նորմերին ու կանոններին: Կատարում է տեխնիկական բնութագրով նախատեսված և փաստացի կատարված աշխատանքների ծավալների հսկողական համեմատական չափագրում,

բ) ստուգում է կատարվող աշխատանքների որակն ու տեխնոլոգիական հերթականությունը, իրականացնում հսկողություն կապալառուի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման նկատմամբ:

Կատարված չափագրումների հիման վրա, սահմանված կարգով, պատասխանատու ստորաբաժանմանն է ներկայացնում համապատասխան տվյալներ պայմանագրային պարտավորությունների կատարման վերաբերյալ եզրակացություններ և կատարված աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրություններ կազմելու համար:

Ծառայությունը պետք է մատուցվի աշխատանքների իրականացմանը զուգընթաց:

Աշխատանքների կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունը պետք է ունենա բարձրագույն կրթությամբ, առնվազն հինգ տարի մասնագիտական աշխատանքային ստաժ ունեցող մեկ ճարտարագետ-հիդրոտեխնիկ, ինչպես նաև ,Շինարարության որակի տեխնիկական հսկողություն հիդրոտեխնիկական ոլորտում լիցենզիա:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

ք. Երևան, Հանրապետության Հրապարակ,

կառավարական տուն N 3

ՀՀ ֆինանսների նախարարության

աշխատակազմի գործառնական վարչություն

հ/հ 900011008902

Կ.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Հայջրնախագիծ ինստիտուտ »ՓԲԸ

ք.Երևան Վ.Վաղարշյան 12

«Հայ Բիզնես Բանկ» ՓԲԸ

հ/հ 1150000088680300

ՅՈՒ. ՋԱՎԱԴՅԱՆ

Հավելված2
«25» նոյեմբերի 2010թ. կնքված
թիվ ՀՀԳՆ-ԾՁԲ-10-20 գնման պայմանագրի

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

/հազար դրամ/

| հ/հ | Գնման ենթակա ծառայության անվանումը | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածը | Նախատեսվում է գնել 2010 թվականին շինարարական աշխատանքների կատարմանը զուգընթաց | |
|---|---|---|---|---|
| | | | IVեռամսյակ դեկտեմբերի 24 | Ընդամենը տարի |
| | 1 | 2 | 5 | 7 |
| 1 | ՀՀ Արմավիրի մարզի Ջանֆիդա գյուղական համայնքի տարածքում Արաքս գետի 28/2-28 սահմանային նշանների հատվածում վթարված ափապաշտպան արգելաթմբի վերականգնման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ | 5113 | 2 200,00 | 2 200,00 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | 2 200,00 | 2 200,00 |

*ՊԱՏՎԻՐԱՏՈՒ*
*ՀՀ գյուղատնտեսության նախարարություն*
*ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, կառավարական տուն N 3*
*ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն*
*հ/հ 900011008902*
*Լ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*ԿԱՏԱՐՈՂ*
*«Հայջրմախագիծ ինստիտուտ »ՓԲԸ*
*ք.Երևան Վ.Վաղարշյան 12*
*«Հայ Բիզնես Բանկ» ՓԲԸ*
*ՀՀ 1150000088680300*
*Յու. ՋԱՎԱԴՅԱՆ*

*Հավելված թիվ 3*
*«25» նոյեմբերի 2010թ կնքված*
*թիվ ՀՀԳՆ-ԾՁԲ-10-20գնման պայմանագրի*

| Պատվիրատու | Կատարող |
|---|---|
| ______________ | ______________ |
| ______________ | ______________ |
| ______________ | ______________ |
| հասցե______________ | հասցե______________ |
| հհ______________ | հհ______________ |
| ______________ | ______________ |
| հվհհ______________ | հվհհ______________ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N__

## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«__» «__________» 2010թ.

Պայմանագրի անվանումը՝ «______________________________________________» գնման պայմանագիր:

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «__» «____________» 2010թ.

Պայմանագրի համարը՝ __________

Պատվիրատուն, ի դեմս______________________________________________ և Կատարողն՝ ի դեմս______________________________________________, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ «___» «_________» 2010թ. կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի (պատասխանատու ստորաբաժանման) N__ եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները (այսուհետև՝ Ծառայություն) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Կատարողը «__» «_________» 2010թ–ից «__» «_________» 2010թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Ծառայությունները

| Ծառայության համառոտ նկարագիրը | Ծառայության քանակական ցուցանիշները | Ծառայության ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանա-կացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| Ընդամենը | ------------- | ---------- | | ---------- |

Վերոհիշյալ Ծառայությունների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը մատուցեց | Ծառայությունը ընդունեց |
|---|---|
| ______________ (ստորագրություն) | ______________ (ստորագրություն) |
| ազգանուն______________ | ազգանուն______________ |
| Կ Տ | Կ Տ |

Հավելված4
25 նոյեմբերի 2010թ. կնքված
թիվ ՀՀ ԳՆ-ԾՁԲ-10-20գնման պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1. Հիմնարկի անվանումը՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

2. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման՝

3. Հիմնարկի սպասարկման ՏԳԲ-ի անվանումը՝ ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն

4. Գանձապետական բյուջետային հաշվի համարը՝ 900011008902

| Բաժին | Խումբ | Դաս | | |
|---|---|---|---|---|
| 11 | 01 | 01 | 01 | 104007 |

Ծրագրի անվանումը՝ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ

(հազար դրամ)

| | Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը | Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը | Գնման նախահաշվային ընդհանուր գինը | Նախատեսվում է ֆինանսավորել Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեից, ընդ որում* | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | ինն ամիս | տարի | Ընդամենը |
| 1 | 2 | 3 | 4 | 6 | 7 | 8 |
| 1 | ՀՀ Արմավիրի մարզի Ջանֆիդա գյուղական համայնքի տարածքում Արաքս գետի 28/2-28 սահմանային նշանների հատվածում վթարված ափապաշտպան արգելաթմբի վերականգնման աշխատանքների կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողություն | 5113 | 2200,00 | 0,00 | 2200,00 | 2200,00 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | 2200,00 | 0,00 | 2200,00 | 2200,00 |

* վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, կառավարական տուն N 3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
հ/հ 900011008902

Կ.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
«Հայջրնախագիծ ինստիտուտ »ՓԲԸ
ք.Երևան Վ.Վաղարշյան 12
«Հայ Բիզնես Բանկ» ՓԲԸ
ՀՀ 1150000088680300
Յու. ԶԱՎԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

0010, Երևան -10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 3 հեռ. (37410) 524-641, ֆաքս (37410) 523-793

19.11.2010թ. №ԳՄ/06.1/5227-10

«Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ-ի տնօրեն

պարոն Յու. Ջավադյանին

Հայտնում ենք Ձեզ, որ անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու ՀՀ Արմավիրի մարզի Ջանֆիդա գյուղական համայնքի տարածքում Արաքս գետի 28/2-28 սահմանային նշանների հատվածում վքարված ափապաշտպան արգելաքմբի վերականգնման աշխատանքների որակի նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունները:

Առաջարկվում է Ձեզ մատուցել վերոհիշյալ ծառայությունները:

Գնումները ֆինանսավորվելու են ՀՀ 2010 թվականի պետական բյուջեով ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից նախատեսված ծախսերի հաշվին: Գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել այդ գնումների ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:

Գնումներին մասնակցելու համար պատվիրատուին պետք է ներկայացվի հաստատված և ստորագրված հայտարարություն այն մասին, որ «Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ -ն.

1. ունի գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական հատկանիշներ, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ.
2. դատական կարգով անվճարունակ չի ճանաչվել, լուծարման գործընթացում չի գտնվում, արգելանքի տակ չունի պայմանագրի կատարման համար հայտով ներկայացված գույք.

3. կամ նրա ղեկավար մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում.

. դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքի, երբ դատվածությունն օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է

. գնման պայմանագիր կնքելու նպատակով չի ներկայացրել կեղծ տվյալներ,

. իր գործողությամբ կամ անգործությամբ չի խախտել գնման պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրած լինի պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ձեր կողմից ներկայացվող հայտը պետք է ներառի նաև Ձեր կողմից հաստատված և ստորագրված պայմանագրի գնի ինքնարժեքի հաշվարկը, իսկ շահույթը չի կարող գերազանցել պայմանագրի գնի տասը տոկոսը:

Համաձայնության դեպքում խնդրում ենք ներկայացնել սույն գրության մեջ նշված հայտարարությունը, գնային առաջարկը և պայմանագրի գնի ինքնարժեքի հաշվարկը:

Միաժամանակ, կից ներկայացնում ենք հիշյալ ծառայությունների գնման պայմանագրի նախագիծը:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության

աշխատակազմի ղեկավար

Կ.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԿՆՔՎԱԾ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ

/Հրապարակվում է ՛Գնումների մասին՚ ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն/

2010 թվականի Նոյեմբերի 25-ին պատվիրատու[a] ՀՀ գյուղատնտեսության նախարարության, որը գտնվում է ք. Երևան Կառավարական տուն 3 հասցեում և կատարող <<Հայջրնախագիծ ինստիտուտ>> փակ բաժնետիրական ընկերության, որը գտնվում է Երևան քաղաքի Վաղարշյան 12 հասցեում, միջև կնքվել է <<Գյուղատնտեսության նախարարության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պայմանագիր (այսուհետև՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջանֆիդա համայնքի տարածքում Արաքս գետի 28/2-28 սահմանային նշանների հատվածում վթարված ափապաշտպան արգելաթմբի վերականգման աշխատանքների կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցումը:

Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 2 200 000 ՀՀ դրամ:

Գնումները կատարվում են Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջանֆիդա համայնքի տարածքում Արաքս գետի 28/2-28 սահմանային նշանների հատվածում վթարված ափապաշտպան արգելաթմբի վերականգման աշխատանքների կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունները ձեռքբերելու նպատակով:

Պայմանագիրը կնքվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի համաձայն[a] մեկ անձից գնումներ կատարելու ձևով:

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն